

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2014/2015 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ /ԱՌԿԱ/ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ
/ԱՆՎՃԱՐ/՝ ՏԱՐԿԵՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՆՑ ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ**

I ՓՈՒԼ

Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտության անվանումը	Ընդամենը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ Առանց տարկետման իրավունքի		
			Ընդամենը	Այդ թվում՝ բզ	Տարկետման իրավունքով
010100	Մաթեմատիկա	3	3		
010600	Ֆիզիկա	2	1		1
020200	Կենսաբանություն	3	3		
020400	Աշխարհագրություն	3	2		1
030400	Պատմություն	3	2		1
032400	Ռուսաց լեզու և գրականություն	2	2		
031000	Հայոց լեզու և գրականություն	2	2		
031300	Անգլերեն լեզու և գրականություն	4	4		
030300	Հոգեբանություն	4	4	1	
051100	Մանկավարժություն և մեթոդիկա	2	2		
050200	Ինֆորմատիկա (տեղեկաբանություն)	2	2		
050400	Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն	2	1		1
030500	Իրավագիտություն (մանկավարժություն)	3	3	1	
080200	Կառավարում	3	3		

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում-հայտ /լրացվում է տեղում/
- Անձնագիրը և պատճենը
- Դիպլոմի և դիպլոմի հավելվածի/միջուկի/ բնօրինակը և պատճենը
- Ինքնակենսագրություն
- 4 լուսանկար /3x4 չափի/
- Տպագրված կամ տպագրման ներկայացված գիտական աշխատանքների ցուցակը /առկայության դեպքում/:

Մագիստրատուրայի ընդունելության դիմումներն ընդունվում են հունիսի 2-ից մինչև հունիսի 6-ը ներառյալ՝
ուսումնամեթոդական վարչությունում:

Առաջին փուլի մրցույթը կանցկացվի **հունիսի 9-ից մինչև հունիսի 13-ը** (բանակից զորացրված դիմորդների մրցույթը՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/, կանցկացվի երկրորդ փուլի ժամանակ):

Առաջին փուլով անվճար համակարգ կարող են դիմել ինստիտուտի տվյալ մասնագիտության 2013/2014 ուստարվա այն շրջանավարտները, ովքեր ամփոփիչ ատեստավորման քննություններից և /կամ ավարտական աշխատանքից ստացել են «լավ» կամ «զերազանց» գնահատականներ, և որոնց դիպլոմի հավելվածում գրանցված ընդհանուր առաջադիմության միջին որակական գնահատականը ֆիզիկամաթեմատիկական և բնագիտաաշխարհագրական բաժինների համար՝ «66» և ավելի, իսկ մյուս բաժինների համար «71» և ավելի միավոր է: Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ դիպլոմի հավելվածում գրանցված միջին որակական գնահատականի հիման վրա՝ մասնագիտական հանձնաժողովի կայացրած որոշմամբ և ընդունող հանձնաժողովի երաշխավորմամբ:

Հավասար միջին որակական գնահատականի առկայության դեպքում՝ հաջորդաբար հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները՝

1. ամփոփիչ ատեստավորման քննությունների և /կամ ավարտական աշխատանքի գնահատականները,
2. մասնագիտական առարկաների միջին որակական գնահատականը /հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ուսումնառության ընթացքում ակադեմիական պարտք չունեցող շրջանավարտին/,
3. տպագրված գիտական աշխատանքները:

Ծանոթություն*

Մրցույթի արդյունքում անվճար համակարգից դուրս մնացած դիմորդները իրենց դիմումի համաձայն կարող են զբաղեցնել վճարովի հիմունքներով հատկացված տեղերը առանց քննության :

ԳՊՄԻ-ի ռեկտորատ
հեռ.՝ (0312) 6-94-94

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2014/2015 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ /ԱՌԿԱ/ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝
ՎՃԱՐՈՎԻ, ԱՌԱՆՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ**

II ՓՈՒԼ

Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտության անվանումը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի (վճարովի) կիրառմամբ, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման	Ուսման վարձը հազար դրամով
010100	Մաթեմատիկա	7	230
010600	Ֆիզիկա	8	230
020200	Կենսաբանություն	12	250
020400	Աշխարհագրություն	7	250
030400	Պատմություն	17	300
032400	Ռուսաց լեզու և գրականություն	10	300
031000	Հայոց լեզու և գրականություն	18	300
031300	Անգլերեն լեզու և գրականություն	21	400
030300	Հոգեբանություն	31	250
051100	Մանկավարժություն և մեթոդիկա	14	300
050200	Ինֆորմատիկա (տեղեկաբանություն)	10	250
032100	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ	8	300
050400	Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն	17	300
050100	Կրթության կազմակերպում	20	350
030500	Իրավագիտություն (մանկավարժություն)	17	350
080200	Կառավարում	16	350
071900	Գեղանկարչություն	20	300

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը

- Դիմում-հայտ /լրացվում է տեղում/
- Անձնագիրը և պատճենը
- Դիպլոմի և դիպլոմի հավելվածի /միջուկի/ բնօրինակը և պատճենը
- Ինքնակենսագրություն
- 4 լուսանկար /3x4 չափի/
- Տպագրված կամ տպագրման ներկայացված գիտական աշխատանքների ցուցակը /առկայության դեպքում/:

Մագիստրատուրայի ընդունելության դիմումներն ընդունվում են օգոստոսի 15-ից մինչև օգոստոսի 20-ը ներառյալ` ուսումնամեթոդական վարչությունում:

Երկրորդ փուլի մրցույթը կանցկացվի օգոստոսի 25-ից մինչև օգոստոսի 30-ը (այդ թվում` բանակից գորացրված դիմորդների մրցույթը` պետության կողմից ուսանողական նպաստների ձևով վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/):

Երկրորդ փուլով վճարովի համակարգ կարող են դիմել ԳՊՄԻ-ի և այլ բուհերի շրջանավարտները: Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով` տվյալ մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման քննական ծրագրին համապատասխան քննությամբ (բացառությամբ «Կրթության կազմակերպում» մասնագիտությունից, որի ծրագիրը կտրամադրվի «Մանկավարժության և սոցիալական աշխատանքի » ամբիոնի կողմից):

Երկրորդ փուլով (ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հասկացված ԲԶ տեղերի շրջանակներում /անվճար/ և վճարովի) կարող են դիմել ՀՀ Ազգային բանակից գորացրվածները:

ԳՊՄԻ-ի տվյալ մասնագիտությամբ բակալավրի աստիճան ստացած դիմորդների ընդունելությունը կատարվում է առանց քննության, եթե դիմորդի տվյալները համապատասխանում են I փուլի պահանջներին, հակառակ դեպքում դիմորդը հանձնում է ընդունելության քննություն:

Ընդունելության քննության հավասար միավորի առկայության դեպքում հաջորդաբար հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները`

1. ամփոփիչ ատեստավորման քննությունների և /կամ ավարտական աշխատանքի գնահատականները,
2. մասնագիտական առարկաների միջին որակական գնահատականը կամ միջին գնահատականը /հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ուսումնառության ընթացքում ակադեմիական պարտք չունեցող շրջանավարտին/,
3. տպագրված գիտական աշխատանքները:

ԳՊՄԻ-ի ռեկտորատ,
հեռ.՝ (0312) 6-94-94